

## Գեղարքունիքի մարզպետ Իշխան Սաղաթեյանի ուղերձը ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ

Հարգելի հայրենակիցներ:

Սահմանադրությունը մեր երիտասարդ պետության հիմնաքարն է, այն կարևորագույն միջոցը, որն անխախտ ու ամուր է պահում Հայաստանի Հանրապետությունը ներքին ու արտաքին քաղաքական ցնցումներից, անկանխատեսելի վտանգներից ու սպառնալիքներից: Այն հստակ սահմանում է օրենքի գերակայությունը, պետական ինստիտուտների գործառույթները, քաղաքացիների հիմնարար ազատությունները, իրավունքներն ու պարտականությունները, ժողովրդավարական արժեքների պահպանման ու զարգացման ուղղությունները:

Անցած 23 տարիների ընթացքում ՀՀ Սահմանադրությունը կատարել է իր պատմական առաքելությունը, դերն ու նշանակությունը և այսուհետ էլ կշարունակի հաստատուն պահել մեր պետականության հիմքերն ու հզորացման հեռանկարները:

Արդեն երկրորդ տարին է, ինչ ՀՀ Սահմանադրության բարեփոխումները նոր

հնարավորություններ են ստեղծել մեր երկրի զարգացման ու հետագա հզորացման համար:

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առթիվ, մաղթում խաղաղ ժամանակներ, համագգային նոր հաղթանակներ:

Լավագույն ցանկություններով

Գեղարքունիքի մարզպետ Իշխան Սաղաթեյան